

1. Ի Ր Ա Կ Ա Ն Հ Ա Տ Վ Ա Ծ

1.1. ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇԸ

2010թ. հունվար-սեպտեմբերին ԼՂՀ համախառն ներքին արդյունքը կազմել է 81512.2 մլն դրամ՝ 2009թ. հունվար- սեպտեմբերի 69350.3 մլն դրամի դիմաց: ՀՆԱ-ի հավելաճի տեմպը կազմել է 5.0 տոկոս, ինդեքս- դեֆլյատորը՝ 12.0 տոկոս:

2010թ. հունվար-սեպտեմբերին մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն, ընթացիկ գներով, կազմել է 570.7 հազ. դրամ, 1509.9 ԱՄՆ դոլար կամ 1146.2 Եվրո՝ 2009թ. հունվար-սեպտեմբերի 490.6 հազ. դրամի, 1377.0 ԱՄՆ դոլարի, 1007.3 Եվրոյի դիմաց:

Արտադրված համախառն ներքին արդյունքի կառուցվածքը

| | 2009թ. հունվար- սեպտեմբեր | 2010թ. հունվար- սեպտեմբեր | իրական հավելաճի տեմպը (տոկոսներով) | /ընթացիկ շուկայական գներով, մլն դրամ/ | |
|--|---------------------------------|---------------------------------|---|---------------------------------------|---------------------------------|
| | | | | ՀՆԱ-ի կառուցվածքը (տոկոսներով) | |
| | | | | 2009թ. հունվար- սեպտեմբեր | 2010թ. հունվար- սեպտեմբեր |
| Համախառն ներքին արդյունք | 69350.3 | 81512.2 | 5.0 | 100.0 | 100.0 |
| Ապրանքների արտադրություն այդ թվում՝ | 27034.8 | 31358.2 | 0.3 | 39.0 | 38.5 |
| Արդյունաբերություն | 10436.9 | 14280.5 | 9.4 | 15.1 | 17.5 |
| Անտառային տնտեսություն | 89.2 | 117.7 | 25.7 | 0.1 | 0.2 |
| Գյուղատնտեսություն | 9455.4 | 8210.5 | -18.4 | 13.6 | 10.1 |
| Շինարարություն | 7053.3 | 8749.5 | 11.5 | 10.2 | 10.7 |
| Ծառայությունների արտադրություն այդ թվում՝ | 38936.3 | 47052.7 | 10.2 | 56.2 | 57.7 |
| Շուկայական ծառայություններ որից՝ | 18841.8 | 22601.4 | 12.1 | 27.2 | 27.7 |
| Տրանսպորտ և կապ | 5213.7 | 5693.1 | 9.7 | 7.5 | 7.0 |
| Առևտուր և հանրային սնունդ | 5188.7 | 5665.4 | 3.1 | 7.5 | 7.0 |
| Ոչ շուկայական ծառայություններ | 20094.5 | 24451.3 | 8.4 | 29.0 | 30.0 |
| Ֆինանսական միջնորդության անուղակիորեն չափվող ծառայություններ (-)* | 2273.8 | 3417.2 | 36.0 | 3.3 | 4.2 |
| Ապրանքների և ներմուծման գուտ հարկեր | 5653.0 | 6518.5 | 3.9 | 8.1 | 8.0 |

ՀՆԱ-ի իրական աճի վրա դրական ազդեցություն է ունեցել ծառայությունների արտադրության ոլորտը՝ 10.2 տոկոսով:

ՀՆԱ-ի արձանագրված 5.0 տոկոս հավելաճի տեմպի 2.0 տոկոսային կետն ապահովել է կառավարում և պաշտպանությունը, 1.6-ը՝ ֆինանսներ և վարկը, 1.4-ը՝ արդյունաբերությունը:

Կառուցվածքային տեսանկյունից՝ 2010թ. հունվար-սեպտեմբերին նախորդ տարվա հունվար-սեպտեմբերի համեմատ աճել է ծառայությունների արտադրության ոլորտի ավելացված արժեքի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ՝ 1.5 տոկոսային կետով: Ի հակառակ դրա, 0.5 տոկոսային կետով նվազել է ապրանքների արտադրության ոլորտի ավելացված արժեքի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ:

* Ֆինանսական միջնորդության անուղակիորեն չափվող ծառայություններն իրենցից ներկայացնում են ֆինանսական միջնորդների բանկային գործարքների ստացած և վճարած տոկոսների տարբերությունը: Քանի որ, գործնականորեն անհնար է անտեսել այդ ծառայություններն ըստ ճյուղերի, այդ իսկ պատճառով ֆինանսական միջնորդության անուղակիորեն չափվող ծառայությունների ողջ ծավալը գրանցվում է որպես պայմանականորեն ընդունված ինչ-որ ճյուղի միջանկյալ սպառում, որի թողարկումը հավասարեցվում է 0-ի, համապատասխանաբար ավելացված արժեքը հանդիսանում է բացասական մեծություն, այսինքն, ընդհանուր տնտեսության մակարդակով համախառն ավելացված արժեքների գումարը (ՀՆԱ) նվազեցվում է այդ մեծության չափով: